

**ՎԵՐՆԱԳԻՐ, ԱՌԱՋԱԲԱՆ ԵՒ ԳԻՐՔ  
ՅԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԵՒ  
ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ**

Գեղարուեստական երկերի, ինչպէս նաև գրական ուղղուածութիւն ունեցող տարբեր գործերի համար առանցքային նշանակութիւն ունեն վերնագիրը եւ ստեղծագործութեան առաջին, կամ առաջին մի քանի տողերը, որոնք երեսմն թելադրում են տուեալ գործի յետագայ ողջ ընթացքը, շարադրանքը, լուծում գաղափարը:

Գրական այս հնարանքը ժմ. դարի հայ դասական գրականութեան մէջ լաւագոյնս կիրառել են Հ. Ղ. Ալիշանը եւ Գարեգին եպս. Սրուանձտեանցը՝ իրենց ոչ գեղարուեստական, բայց շեշտուած գիտական եւ գրական գործերում: Ստեղծագործական յղացքի այս ելակիտը ապահովել է պատումի զարգացման որոշակի միասնականութիւն, ուր վերնագրի գաղափարը ծաւալուել է հեղինակների գիտական հետազօտութիւնների արծարծած հարցադրումներում, վկայակոչած պատմական եւ ժողովրդական սկզբնաղբիւրներում եւ կատարած եզրայանգումներում:

Հայր Ալիշանի եւ Գարեգին Սրուանձտեանցի լուսաւորչական հասարակահեցութիւնը, որ կառուցուած է հայոց հայրենիքի, ազգային-պատմական բնաշխարհի մանրամասն, նիւթական ճանաչողութեան ու քրիստոնէական աշխարհայեցութեան միասնութեան վրայ, հնարաւորութիւն է տալիս դիտարկել այն տիպարները, որոնք ոչ միայն գրելառնի արդիւնք են, այլեւ յստակօրէն ձեւակերպուած գաղափարական գործառոյթ են կատարում: Անդրադարձել ենք վերնագիր-առաջաբան-բովանդակութիւն եռաստիճան համակարգին, ներկայացնել դրանց կառուցուածքային առանձնայատկութիւններն ու հայեցակարգը, մեկնաբանել նշանային համակարգն ու գաղափարական յղումները:

**ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ՄԿՊՐՈԼՆՔԸ,** թէ ինչպէս է վերնագիրը բացւում է առաջաբանում, ապա տուեալ գործի իմաստային եւ գրական խտացմամբ եղրափակող կապակցութեան վերածւում վերջաբանում: Յօդուածում կիրառուել են համադրական, պատմահամեմատական եւ վերլուծական եղանակները, ընդհանուր տեսական անդրադարձից յետոյ քննութեան ենք առել Սրուանձտեանցի «Գրոց ու բրոց», «Մանանա», «Թորոս աղբար...» գործերը, դրանք զուգադրել Հայր Ալիշանի «Արշալոյս քրիստոնէութեան Հայոց» եւ «Յուշիկ հայրենեաց Հայոց» գործերին: Քննութիւնը, ըստ առաջադրուած խնդրի, հետաքրքիր շերտեր է յայտնաբերել այս ստեղծագործութիւններում, որ եւ ներկայացրել ենք սոյն յօդուածում:

#### ՊԱՏՄԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

**ԺԹ.** դարակէսը հայկական իրականութեան ամենաբարդ փուլերից է: Պատմաքաղաքական եւ հասարակական իրադարձութիւնները թէ' Արեւմտեան Հայաստանում, թէ' Արեւելահայաստանում, որ ուղղակիօրէն առնչւում էին գոյութենապաշտ գոյաբանութեան խնդիրներին (ստորոգելիին), սրել էին ազգային ինքնանաչման անհրաժեշտութիւնը, արթնացրել ազգային ոգին, ընդլայնել տնտեսական ու հոգեւոր կեանքի բարեկարգման հեռանկարները՝ նախադրեալներ ստեղծելով ազգային մշակոյթի եւ գրականութեան զարգացման համար: Ազգային ոգին ամէն տեղ եւ ամէնուր որոնում էր Հայրենիքի գաղափարը՝ ձգտելով ապագայի հեռանկարը դուրս բերել բնաշխարհի, պատմութեան ու ցեղի ներքին կարողութիւնների բացայատման հնարաւորութիւնից:

1874 թուականին Պոլսում լոյս է տեսնում Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանցի առաջին ժողովածուն՝ «Գրոց ու բրոց»<sup>1</sup>, որ բացառիկ ընդունելութիւն է գտնում հայ իրականութեան մէջ՝ հեղինակի անունը մէկընդմիշտ կապելով հայ ազգագրութեան ու բանահաւաքչութեան պատմութեանն ու ազգային վիպերգի առաջին գրառմանը: Հայագիտութեան մէջ Սրուանձտեանցի բոլոր գործերի առիթով առարկայացել է ընդհանուր ճանաչման արժանացած մի բնորոշում, մի տեսակէտ, որ ձեւաւորուել է ժամանակի ընթացքում եւ առնչւում է այդ գործերի բանահիւսական-ազգագրական հիմունքին: Սա հիմնաւորուած է Սրուանձտեանցի գրական ժառանգութեան քննութեան ահռելի փորձով, սակայն այդ

<sup>1</sup> ՄՐՈՒԱՆՁՏԵՍԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Միհրի դուռ, Կ. Պոլիս, 1874 թիւ: Յղումներն այս գրքից:

բնագիրը ենթակայ է նաեւ մեկնութեան մէկ այլ ելակէտի՝ դրա իմացաբանական ու գեղարուեստական համարժէքի ըմբռնմամբ։ Մեկնաբանութեան այդ տարբերակը՝ կապուած սոյն ուսումնասիրութեան գիտական խնդրադրութեան հետ, ներկայացնում ենք ստորեւ։

**Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցի լուսաւորչական աշխարհայեցքը ուղղակիօրէն յենում էր պատճառականութեան սկզբունքով կապուած պատմական ժամանակի, աշխարհագրական միջավայրի եւ ցեղային պատկանելութեան խորքային ճանաչողութեան վրայ. մեր բնութիւնը, հողը, եզերքը կրում են պատմութեան յիշողութիւնը, նիւթական ու աննիւթեղէն արարումների հետքերը, ժողովուրդը՝ քրիստոնէական աշխարհայեցութեան ու մշակոյթի ժառանգական ծածկագիրը։**

**Գրեթէ ամբողջ կեանքի ընթացքում, առանց դոյզն-ինչ դադարի, ամենատարբեր գործառոյթներով ու աշխատանքային ծըրագրերով ազգային գործիչը պտտուել է Արեւմտեան Հայաստանում, իբրեւ անխոնջ ուխտաւոր ու նուիրակ շրջել քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, մօտիկից ճանաչել Հայրենիքը, վաղնջական հողի վրայ ապրող հայ մարդուն ու իր համար սահմանել մի ճշմարտութիւն, որ դուրս էր աշխարհագրական Հայրենիքի, ժողովրդի կենցաղավարութեան ու բնաւորութեան սահմաններից։ Նա ոչ միայն գոյքագրում է պատերազմի, սովի ու մահուան արհաւիրքին մատնուած հայկական գիւղերի ինչքն ու ունեցուածքը, մարդկային ու պատմամշակութային աղբիւրները, այլեւ դրանք ներկայացնում է իբրեւ ամբողջական վաւերագրեր՝ խորքային ու նպատակամէտ դիտարկումներով։**

**ԺԹ. դարակէսի ազգային աղէտեալ ժամանակներում սրբագան հողը, որ դարեր շարունակ պանծացել է հայոց ստեղծագործ հոգու անձեռակերտ արարումներով եւ փառքի ու անձնագուռութեան անօրինակ սխրանքներով, պատմական ստոյգ հանգամանքներում ամլանում, ամայանում, բռնութեան է ենթարկւում անընդհատ, անվերջ, ամէն օր։ Այս իմաստով ներքին համաշափութեան ու նպատակային տրամաբանութիւնը Սրուանձտեանցի բնագրերում կապակցում է գործողութիւնների, միջավայրը «գրառելու» երեմն անկապակից, դրուագային թուացող շարժումը՝ իրականում ստեղծելով հայոց ազգագրութեան մի ամբողջական մատենաշար, որին հեղինակը շատ աւելի լայն ազգակազմիչ-գաղափարական գործառույթ է վերագրում, քան կարող է թուալ առաջին**

**Հայեացքից:** Հայոց ինքնաստեղծումի ունակութիւնը, քրիստոնէական ոգու անընդհատութիւնն է, որ միացնում է ընդհատուած պատմութեան ծայրերը՝ իրենով լցնելով հայոց ճակատագրի մէջ պակասաւոր, կիսատ թուացող բազմաթիւ դըրուազներ:

Այս դրոյթը մի որոշակի դիտակէտից կարող է թէական թուալ, երբ Սրուանձտեանցի՝ առանց բացառութեան գրեթէ բոլոր գրքերում խիստ առարկայական, երբեմն այնքան ցաւագին-իրական է պատմական Հայաստանը ներկայացնող ամէն իրողութիւն: Իրական միջավայրի պատումը, որ ազգագրական բնագրի բոլոր էջերում, դրուագներում կարեւորում եւ «գրառում» է Սրուանձտեանցը, դէմք, անուն, ծագումնաբանական որոշակիութիւն է ստանում հէնց ոգեկանութեան պատմութիւնը նկատի ունենալով: Բանահաւաք-ազգագրագէտն այն ներկայացնում է իրեւ համակարգ՝ թէպէտ այն չի երեւում, բայց երեւում է ձեւաւորուած ամէն ինչի մէջ՝ աւանդոյթից մինչեւ ծիսակատարութիւն, աշխարհագրական տեղանունից մինչեւ եկեղեցիների ու մատուռների պատմութիւն:

Եւ ահա, այնպէս, ինչպէս կապում է ոգու եւ իրերի աշխարհը, նոյն տրամաբանութեամբ ստեղծում է փիլիսոփայական մի համակարգ՝ վերնագիր-առաջաբան-ստեղծագործութեան բնագիր եռաստիճան շրջանակում: Սրբալոյս վարդապետը իր որեւէ ժողովածու պատահական չի անուանել դրանք վերնագիր-գաղափարներ են, որոնց ներսում պարփակուած, տեղաւորուած են մի զարմանալի աշխարհայայտնութիւն, հայրենիքի մասին մի ամբողջական ու հիմնաւոր գիտութիւն:

Հայրենածանաչութեան բնագանցութիւնը, որ իրեւ ազգային գաղափարաբանութեան, ինքնագիտակցման անխուսափելի անհրաժեշտութիւն, իրենով զբաղեցրեց ամբողջ ԺԹ. դարը՝ սկսած Մեսրոպ Թաղիաղեանից, Խաչատուր Աբովեանի՝ Կրեսոս թագաւորի որդու համաբանութեամբ հայ ազգին չճանաչող աշխարհին նետած աղաղակից, թէ՝ «անօրէն, եղ ո՞ւմ ես սպանում, քաշի՛ր քուրդ ետ, չե՞ս տեսնում, որ առաջիդ Կրեսոսն ա, աշխարհի տէրն ա», մինչեւ Ալիշան, Խրիմեան, Սրուանձտեանց: Սա ԺԹ. դարի հայ գրականութեան աշխարհայեացք էր, փիլիսոփայութիւն, որ իմաստաւոր պատմութիւն է գծում յատկապէս դարակէսի հեղինակների գործերում եւ վերը նշուած եռաստիճան հայեցակարգի

**առումով յստակ երեւում Գարեգին Սրուանձտեանցի բոլոր գրքերում:**

### ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ՈԳՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

«Բարեկամ,

Մարդկային ընկերավարութեանց սովորութիւնն է, երբ հեռաւոր տեղէ մը գան, իրենց գտնուած երկրի բարիքներէն կամ հազուագիւտ իրերէն ընծայ մի կը բերեն բարեկամին: Հետեւելով այսմ, երբ Պօլիս եկայ, այս անգամ ուզեցի ընծայ բերել Ձեզ իմ երկրէն: Ի՞նչ: Ի՞նչ կը գտնուէր հոն, ուր ես էի. Հող եւ ջուր միայն, եւ հողով ու ջրով եւեր կեանք վարող հայ ժողովուրդ: Գրոց ու բրոց ծրար մ' ընծայ բերի Ձեզ այն հողէն ու ջրէն, որ Հայաստանի անունը կը կրեն տակաւին, ժողովրդէ մը, որ սերունդ եւ անուն Հայութեան ունին»:

Ահա այսպէս է սկսում «Գրոց ու բրոց»ը Հայոց ուխտաւոր ճամփորդը, ով, պատառ-պատառ հաւաքելով ժողովրդի մէջ հետզհետէ մոռացուող բանահիւսական չքնաղ կտորները, հէքիաթներն ու երգերը, խոնարհուելով խոնարհուած վանքերին ու փայփայելով Աստուածաշունչ մատեանները, իր խնդիրն է համարում իրեւ ընծայ դրանք վերադարձնել տիրոջն ու իրար շաղկապել ազգի մեռնող մարմինն ու քրիստոսապաշտ հոգին:

Հայոց Հայրենիքի ճանաչման պատմական ու քաղաքակրթական անհրաժեշտութիւնը միայն, ըստ Սրուանձտեանցի, կարող է բացայացել այն մտաւոր հանճարը, որ ապրելու գիտութեան է վերածել քրիստոնէական մեր աշխարհայեցութիւնն ու ազգային կեցութեան, գործունէութեան առանձնայատկութիւնը: «Իւր քաղաքականն ու կրօնականը, իւր նիւթականն ու հոգեկանը առհասարակ կողոպտուած. գանձն ու զինքը առնելէն զկնի, մարդն ու իւր բնակարանը, տանարներու բարերը եւ լեզուն ու մագաղաքներն անգամ գերի գնացած են, ստրկութեան ենթարկուած են», - «Գրոց ու բրոց»ի նախարանի այս կտորը սոսկական յղում չէ ընթերցողին կամ զգացական ընծայագիր, այլ աշխարհայեցքային ու ստեղծագործական գիտակցուած հիմունք, գաղափար կազմաւորող դրոյթ, որի շուրջ հիւսւում, ձեւ է առնում մեծ ուխտաւորի Հայրենապատումը: Նրա լուսաւորական աշխարհայեցքը կառուցուած է Հայոց պատմութեան ստոյգ, բացառիկ մանրամասների ճանաչողութեան վրայ, ինչից եւ արտածում է գոյաբանութեան մեր ուսմունքը. «Քայց մեր երկրի հողն ու ջուրը, օդն ու երերքը օծուած են հրեղէն լեզուով, հրեղէն հոգուով, որի ոչ միայն վերաստեղծեր են զիայեր,

այլ եւ վերապատմեր են յետագայից Հայաստանի նահապետաց, դիւցազնաց, թագաւորաց եւ առաքինեաց անունները ու գործերը: Այս լեռները, ... հովիտները, աւերները, հողմերը, աստղերը, ամէնքն ալ խորիրդաւոր անուն մը ունեցած են. եւ այդ ամէն մէկ անուն կը պարունակէ իւր մէջ անձի մը կամ անցի մը պատմութիւն, թէ առասպել համարուի այն առ այժմ ու թէ իրական, եւ այսպիսեաց շարունակութիւնը մագաղաքներէն աւելի տոկուն եւ անջինց մատեան մը շարունակած է. այն է՝ բնակչաց բերանացի աւանդութիւնն կամ վէպէ եւ զրոյցք: Ասոնց մէկ նշմարն է իմ ընծայս»:

«Գրոց ու բրոց» ժողովածուն կազմուած է երկու հիմնական մասից՝ առաջին մասի մէջ բանաստեղծական գունաւորում են ստացել Տարօնն ու Վասպուրական աշխարհները, երկրորդ մասում զետեղուած է հայ ժողովրդի ազգային մեծ վիպի առաջին պատումը Մշոյ բարբառով, «Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ» վերնագրով, որ առաջին անգամ էր ներկայացւում հայ հանրութեանը:

Առաջին մասում Սրուանձտեանցը իրեւել մուտքի խօսք կարեւորում է ժողովրդի կենդանի խօսակցական լեզուն, առանձնակի ուշադրութեան առնում Տարօնի ու Վասպուրականի բարբառները, բաղդատում գրական ու «գաւառական» լեզուները՝ բազմաթիւ օրինակներով ներկայացնելով այն բացառիկ բնատուր չքեղութիւնը գաւառական լեզուի, որով ժողովուրդը ճանաչել ու իւրացրել է իրեն շրջապատող աշխարհը՝ թռչունն ու կենդանին, ծառը, ծաղիկը, բնութեան երեւոյթներն ու աշխատանքային գործիքները: Ինչո՞ւ: Նուիրեալ հոգեւորականի համար լեզուն հոգեւոր նեցուկն էր հայոց գոյութեան, ինքնութեան նշանակիր միաւոր, ապա նա հայեացքը յառում է մեր քրիստոնէական հաւատքին, որ իւրօրինակ ձեւ տուեց հայի ազգային անհատականութեանն ու, առաւելագոյնս ընդգրկելով մեր գոյութեան կարեւորագոյն շերտերը, հիմնաւորուեց մեր ներսում իրեւել կենսական ծածկագիր: Սրուանձտեանցը խնդիր ունէր բոլոր մանրամասների մէջ ճանաչել տալու հայոց ինքնութեան պարագաները, նրա ազնուագոյն ոգու բացառիկ տրուածքը, որ հետազօտողը կապում է այս եւ էլի մի քանի նախադրեալների հետ:

Հայերի դրախտային երկիրը, որ, ըստ բնական դիրքի անընդհատ փոփոխուող իր աշխարհագրութեամբ ձեւ է տուել այս ժողովրդի՝ տեղավայրի ինքնատիպ բնոյթին ու բնաւորութեանը, նրա պատմութիւնը, որ օրինակ է դժնդակ անկումների ու բացառիկ մեծագործութեան, հայոց բարոյական առաքինութիւնն ու

ապաշխարհիկ աստուածապաշտութիւնը, ըստ Սրուանձտեանցի, կարիք ունեն ճանաչումի ու վերընթերցման։ Ահա թէ ինչու հայոց երկրի ուխտաւորի ու նույիրակի ստեղծագործ հոգու որոնումներում միանդամայն բանահիւսական երանդ է ստանում «Գրոց ու բրոց»ի հայկական իրականութիւնը, ժամանակի ու տարածութեան միանութիւնը ջնջում է սահմանը առասպելի ու պատմութեան՝ իւրօրինակ ներզգայական հովուերգութեան մէջ լուծելով հողի ու ոգեկանութեան ճանաչումի պարագան։

### ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԴԵՊԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բոլորովին այլ յանձնառութիւն ունի նրա գրիչը «Մանանա» ժողովածուի պատումի դիպաշարային հետագծում. արդէն միանդամայն իրական ժամանակն այստեղ ընդհատում է կեանքի բանահիւսութիւնը, եւ ամենայն դաժանութեամբ յառնում է թուրքական բռնակալութեան սարսափին մատնուած հայոց ճակատագորի ողջ ողբերգականութիւնը։ Խոր իմաստ է ստանում ինքնաւերլուծման ու ինքնաքննութեան աշխարհայեացքային ելակէտը, մայր հողի վրայ կատարուած պատմական փոփոխութիւնները երեւում են ամենափոքր տատանումներով անդամ։

Սրուանձտեանցը, իր դժուարին ուղեգնացութիւնների ընթացքում վերապրելով ժողովրդի հոգեւոր ու գոյաբանական մաքառումների ամբողջ փորձը, ներկայի ողբերգականութիւնը չափելով անցեալի անօրինակ փառքի համեմատ, բացառիկ հանճարեղութեամբ կարողանում է կապակցել, միացնել ծայրերը արհաւիրքներով ու աղէտներով տրոհուած հայոց կենսագրութեան։ Հնամենի բնաշխարհը, անցեալի դառնաթախիծ յիշատակները՝ աւերուած եկեղեցիներ ու կիսակործան բերդեր, քանդուած մատուններ ու սրբալոյս մագաղաթներ, մարդկային ճակատագրերի չքնաղ պատումի, հերոսութեան ու հայրենանութիրումի անօրինակ գեղեցիկ էջերը ողբերգական խոհերով են պարուրում Սրուանձտեանցի հոգին՝ մեծ իմաստ տալով բարենորոգութեան ու լուսաւորական նրա ծրագրերին, որոնց մասին կը խօսենք իր տեղում, «Մանանային» անդրադառնալիս։

Աւելի են թանձրանում ողբերգական գոյները «Թորոս Աղբար»ի էջերում, երբ Արեւմտեան Հայաստանի չարաղէտ իրավիճակն ու օրէցօր վատթարացող ազգային կացութիւնը Սրուանձտեանցի միտքը տրոհում են դառը խոհերով՝ մեծ հաւատաւորի

նրա ուխտը լուծելով «կորուստը՝ կորուսուած տեղը» (պիտի որոնես) ազգափրկչական գաղափարով։ Նրա ընտրած իմացութեան ճանապարհը այս երեք գրքերում յայտնագործեց հայոց հայրենիքը, ճանաչելի դարձրեց բնաշխարհը, պատմութիւնը, մարդկանց՝ այս ամբողջական բնագրից արտածելով հայոց պատմափիլիսոփայութիւնը, ազգային անհատականութեան առանձնայատկութիւնն ու քրիստոնէական ոգու տիպաբանութիւնը։

**Բայց կրկին դառնանք «Գրոց ու բրոց»ին։**

«Սրուանձտեանց եկեղեցական գրական դասակարգին մեջ ունի ամենախոշոր նշանակութիւն մը իր բեղմնաւոր գրչով, ապրելով Հայաստանի մեջ խոշոր պաշար մը ամբարած է ազգագրական նիւթերու։ «Գրոց եւ Բրոց»ը ծրագիր մը կը համարուի իր ազգագրական նոյն պաշարներուն։ Այդ գործի մասին Ա. Յ. Այվազեան գրած է. «Այս չենաղ ծրագիրը՝ իւր կարեառօտ սահմանին մեջ՝ այնպիսի լայնարձակ հորիզոններ կը բանայ մեր աշացն առշեւ, այնքան իդաեր եւ ակնկալութիւններ կը ծնուցանէ մեր սրտին մեջ, որ ընթերցումը աւարտելէն ետև բնական հարցում կուգայ վերծանողին շրթանց վրայ թէ, արդեօֆ սոյն գրքոյիկը՝ մեկ քանի ստուարահատոր երկասիրութեանց յառաջաբնը եւ կամ գլխադասութի՞ւնն է, եթէ է ինքնին միայն հրատարակուած մատենիկ մը՝ որ շարունակութիւն չունի»<sup>2</sup>, - գրում է հայր Սիմէոն Երեմեանը 1912 թուականին «Բազմավէպ» հանդէսում հրատարակած «Գարեգին Սրուանձտեանց» գրական դիմանը-կարում։

Բացառիկ վայելչութեամբ ներկայացնելով Սրուանձտեանցի կերպարը՝ հայր Երեմեանը առաջադրում է մի հետաքրքիր դրոյթ՝ կապուած մշակոյթի, հոգեւոր ու նիւթական ստեղծումների պատմութեան մէջ ազգային ինքնագիտակցութեան ելակէտի, ապա երեւակայութեամբ ձեւակերպուած այն ծրագիրի հետ, որ սկիզբը պիտի լինէր ազգային նորոգութեան ու զարթօնքի։ Անշուշտ, «Գրոց ու բրոց»ի ծրագիր լինելու հանգամանքը համակողմանի քննութեան է դրուել բազմաթիւ հայագէտների կողմից եւ այս պահին դուրս է մեր ուշադրութիւնից։ Մեզ հետաքրքրողն առաւելապէս հայրենիքի ճանաչման աշխարհայեացքային սկզբունքն է, իմացաբանական ելակէտը, որի վերաբերեալ առաջադրուած քննական տեսակէտը կառուցակազմիչ գործառոյթ ունի նախեւառաջ

2 ՀԱՅՐ ՍԻՄԷՈՆ ԵՐԵՄԵԱՆ, Գարեգին Սրուանձտեանց, ի «Բազմավէպ», թ. 2, Վենետիկ, Սուրբ Ղազար 1912, 8:

գրքի վերնագիր-հայեցակարդում։ Հստ այդ հայեցութեան, ժողովրդին իր անխառն ակունքների, իր ծննդոց աւազանի հետ կապելու գործում բացառիկ դեր ունի «գրոց» արուեստը, դարերի հեռուներից աւանդուած հոգեւոր ժառանգութիւնը, որ, չնայած պատմական դժնդակ հանգամանքներին, պահել է հայոց ժամանակի անընդհատութիւնը, մշակոյթի քրիստոնէական ծագումնաբանութեամբ արտածել սրբազն հայրենիքի գաղափարն ու կեցութեան բանահիւսութեան յաւերժական խորհուրդը։ «...Հայերը մանգաղով հնառուած ժամանակ սերմերը քափեր են փոշիներուն մէջ, արմատէն խլուած ժամանակ ջեղ մը բողուցեր են քարի մը տակ, ձորի մը մէջ եւ նորէն բուսեր, ծլեր, արմատ ճգէր, ոստ արձակէր, ծաղկէր ու պտղաբերէր են անդէն», - խօսում է Սրուանձտեանցը հայոց ճանապարհի ընթացքի մասին՝ արտակարդ պատկերաւորութեամբ ներկայացնելով ազգային Ոգու տիպաբանութիւնը՝ այդ գաղափարի շուրջ հաւաքել-ներկայացնելով այն կրող հերոսական կերպարներ, դրա ոգեդնութեամբ սրբազնացած բազմաթիւ պատմութիւններ, երգեր, պատառիկներ, կենդանութիւն ու շարժում հաղորդելով նիւթական արարումներին, որոնք հայոց աշխարհայեցքի հետքերը պահում են իրենց մէջ։

Իհարկէ, իրեն չվերապահելով ո՛չ Հայր Ալիշանի՛ բանաստեղծելով գիտութիւն անելու աստուածատուր ձիրքը, ո՛չ Երեմիա Եպիսկոպոսի հայրենասիրութիւնը, որոնցով «արդարեւ ուժ եւ ուանդ ունեցող» գործեր են ստեղծուել, Սրուանձտեանցն իր գրական վաստակը ամենեւին ընդունուած բարձր չափանիշներին հարիր չի համարում ունեցած քիչ ազատ ժամերին պատառ-պատառ հաւաքած, կորստից ու մոռացութիւնից փրկուած մի յիշատակարան, որի բացառիկ արժէքը, սակայն, ներըմբռնելի է ամէն մի բանական արարածի՛ ազգային հեռանկարի իմաստով։ «Ես իբրեւ մեղու ապրած ու աշխատած եմ. զիս փերակի մէջ կը պահեին եւ դրսէն դուռը կը ծեփէին։ Իմ օրերուս մեծ մասը անլուս անտես եւ փականքի տակ անցուցեր եմ, բայց երբ բաց գտեր եմ դուռը, փութացեր եմ ծաղիկներուն վազել, մասիկ-մասիկ անննցմէ առնուլ, բուփէ բուփ բոչտելով, եւ հաւաքածներէս շատը, բամիին եւ պիծակներուն դէմ պատահելով, կորսնցուցեր եմ։ Ահա ինչ որ մնացած էր բերանս, կը ճօնեմ ազգիս բանասիրաց՝ ձեր ձեռքով մատուցանելաւ զայն, ով իմ բարեկամ»։ Իսկ խոնարհ հաւատաւորի նրա հաւաքագրածը հայրենագիտական մի ուսուցարան էր, հայոց հայրենի-

քի ծննդոց ու յոյսի վաւերամատեան՝ փաստերի վերահմաստաւորմամբ, ազգային գաղափարի, ազգային անհատականութեան ու քրիստոնէական աշխարհայեցքի գիտակցմամբ:

Ու թէեւ ոչ մի նշան, ոչ մի դրուագ ու պատում հէնց այնպէս, իբրեւ ինքնին իր, ինքնակայ իրողութիւն չի վկայուած «Գրոց ու բրոց»ում, զարմանալի խորութիւն ունի հայր Ղեւոնդ Ալիշանի՝ ժողովածուին տրուած բարձր գնահատականը միջնորդող բացառիկ նուրբ ու խորքային դիտարկումը, թէ. «Միայն թէ ես այդչափով գոհ չեմ ըլլար, աւելի մեծ բրոցներ կ'ուզեմ որ Գրոցն ալ աւելի ընդարձակ ըլլայ»<sup>3</sup>: Ալիշան հայրն իր մեծութեան համեմատ թերեւս պեղելիք-ներկայացուելիք աւելին էր ակնկալում, թէեւ բացառիկ յարգանքով է ընդունում ժողովածուի ներքին տրամաբանութիւնը, հեղինակային դրոյթը, թէ հայոց աշխարհի

3 Մանանայ, Կ. Պօլիս, 1876, Շնորհներ, էջ 21, նամակն ամբողջութեամբ՝ այստեղ.

«Ա. Ղազար, 16 Յունվ. 1875.

Տէր Վարդապետ.

Քաղիդիդ լրագրաց մէջ նախ կարդալով Զեր գրոց եւ բրոց ծանուցումն՝ գրեցի առ թղթակիցս խաւրել ինծի օրինակ մը. բայց իրմէ առաջ ընդունեցայ Զեր իսկ ընծայածը, որով կ'իմանաք թէ ինծի բանի՝ պատիկ հանոյ եղաւ, եւ ո՞րքան շնորհակալ եմ, թէ՝ ընծայելուդ եւ թէ՝ ընծայիդ. որ աւելի հանոյացաւ երբ կարդացի, եւ երբ իմ ընկերակիցքս ալ նոյն հանութեամբ կարդացին: Շատոնց իմ երեւեկ փափաքանացս մէկն ալ եր լսել ի զանազան կողմանս Հայոց աշխարհի գտեղական աւանդութիւնս եւ հաւատարմութեամբ նշանակել. եւ ահա նոյն է Զեր ըրածն ալ. եւ ուրիշ քանի մ՝ ազգասէր վարդապետաց, զոր յիշէք, եւ որոց հաւաքման հրատարակութեանց ալ սպասեմ փափաքանօֆ, եւ արդէն շատ ալ սպասած եմ, որովհետեւ տարիներով առաջ խոստմունք եղած էր՝ յազգային լրագիրս՝ այդպիսի հրատարակութեանց, յորոց մէկն ալ եր Ղեւոնդ վարդապետի հաւաքեալ Յիշտակարանք Զեռագրաց:

Զեր հրատարակեալ աւանդութեանց մէկ մասն արդէն ծանօթ էր ինձ՝ մէր Հ. Ներսէս վարդապետի ուղեւորութեամբ, բայց գտայ եւ նոր զրոյցներ Զեր ենվ: Միայն թէ ես այդչափով գոհ չեմ ըլլար, աւելի մեծ բրոցներ կ'ուզեմ որ Գրոցն ալ աւելի ընդարձակ ըլլայ: Ռւնեի բանի մը հարցունելիք ալ, այլ գրեյլիք ուրիշի ենվ ըլլարով՝ մնաց ուրիշ առթի: Միայն յիշեմ որ յ'85 երես երգ մը յիշես, փափագէի այդոր օրինակն ունենալ: -Յ'82 երեսն այլ յիշէք Կապուտան ծով մը. իմ գիտցածս նոյն պէտք է ըլլայ ընդ Որմիայ ծովուն:

Փափագէի եւս որ Դաւթի պատմութեան մէջ գրուած բանի մը բառից ծանօթութիւն բրած ըլլայիք, որք ինծի պէս ի պանդխոսութեան ծնած եւ ապրածի անծանօթ են:

\* զոր հանեցէք ընդունիլ. եւ ողջ լերում:

Հ. Ղեւոնդ Մ. Ալիշանեան»:

այսօրեայ ողբերգական կացութիւնից անդին մի այլ, պատմա-առասպելական իրականութիւն կայ, եւ այս զուգահեռի վրայ Հայ-րենիքի, բնիկութեան, ծագումնաբանական տարածքի մասին հնա-րաւոր առաւելագոյնը պատմւում է գրքի էջերում:

Հայոց ծննդաբանութիւնը սկսում է հեթանոսական շրջանի պատմութեամբ՝ բազմաստուածութեան դիցարանով ու պաշտա-մունքային ծէսերով, օձերի ու վիշապների, չար ոգիների ու պա-հապան հրեշտակների մասին պատումներով, չքնաղագեղ Աստղիկ աստուածուհու առասպելով, գոռող ու նանրամիտ Բելի, նրա՝ քար դարձած ուղտապանների, ապա Արայի, տարփանքից խելակորոյս Շամիրամի ու արալէզների, Սուրբ թոնրի ու վիշապ-օձերի, Մշոյ ու մշուշի, Լուսնի ու Արեւի մասին հիասքանչ պատումներով։ Սրուանձտեանցը դարերի այս շարժման մէջ անընդհատ որոնում է տիեզերական բանականութիւնը, կարգը, որ անպայմանօրէն կա-պում է հայոց դարձի, քրիստոնէութեան մուտքի, ապա՝ քրիստո-նէական աշխարհայեցքի թողած հետագծի հետ:

Իրական Հայաստանի ու բացարձակ գաղափարի յարաբե-րակցութեան մէջ մի օր Հայոց աշխարհում յայտնւում է Քրիս-տոսի Լոյսը, որ ոչ միայն փոխում է հայոց աշխարհայեցութիւնը, այլև ստեղծում է իր գիտութիւնը, որի իմացական ու մշակու-թային հոսքերի (գրոց ու բրոց) պատմութիւնը առօրեական թո-ւացող դէպքերի ու իրադարձութիւնների շղթայում այնքան հմտո-րէն տեսնում եւ գրի է առնում սրբազան վանահայրը։ «Գրոց ու բրոց»ի մի հետաքրքիր առանձնայատկութիւնն է թերեւս այս հանգամանքը։ Սրուանձտեանցը ձգտում էր ճանաչել հոգեւոր այն մեծ ներոյժը, Ոգու նախակերտ ոյժը, որ տարածւում էր ընկերային-քաղաքական ու ազգային խնդիրներից դարեր շարու-նակ տրոհուող, բզկատուող հայկական իրականութեան վրայ՝ «իսկ եթէ անում եմ, թէ ինձ ել չէք հաւատում, գործերի՛ն հաւատացէք, որպէսզի իմանաք եւ ճանաչէք, որ Հայրը իմ մէջ է, եւ ես՝ Հօր մէջ»<sup>4</sup>:

Քրեթէ նոյն համաբանութեամբ քրիստոնէական Լոյսի ա-նընդհատութեան, քրիստոնէութեան փիլիսոփայական ու աշխար-հայեցքային յղոցմների հայեցութիւնն է գծում Հայր Ղեւոնդ Ալիշանն իր «Արշալոյս քրիստոնէութեան Հայոց»<sup>5</sup> գրքում։

4 Ցհ 10.38:

5 ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ, Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ, 386 էջ։ Մաս-մաս իրատարակում է «Բազմավեպ»ում՝ 1900 թուականի մայիսից սկսած։ Ամբողջութեամբ՝ 1901 թուական։

«ԼՈՇԱ- Ո՛ՐՔան գեղեցիկ, սիրելի, կարեւոր եւ գերազանց քան. Անդրանիկ յարարածս Աստուծոյ, ըստ Ս. Գրոց, եւ ամենայն զգալի արարածոց երեւցընող. իսկ աներեւոյթ բնական արարածոց՝ գրեթէ գոյութիւն իսկ. զի միայն լուսով երեւակայուին եւ քացատրուին: Երեւելեաց եւ աներեւութից Արարիչն անգամ վկայուի «բնակեալ ի Լոյս անմատոյց». որ եւ ինձնին ի մարմնանալն եւ յերեւել ի վերայ երկրիս, վկայեց իրեն համար, «ես Լոյս՝ յաշխարի՝ եկի»,՝ այսպիսի սկիզբ ունի ծերունազարդ նահապետի այս մատեանը. գրքի նախաբանը սկզբնաւորող «Լոյս» բառը անմիջապէս հայեցակարգ է ձեւաւորում՝ ամբողջական ու միասնական կառուցուածքի մէջ դառնալով անտրոհելի ու իմաստակիր մտակենտրոն: Քննութեան ենթակայ պատմական ժամանակի բոլոր շրջափուլերում՝ հեթանոսական բազմաստուածութեան դիցարանից մինչեւ լուսաւորչական դարաշրջան, երեւում է ճանապարհը, որ Ալիշանի մօտ պարզապէս բացարձակ ներդաշնակութեան կամ լուսաւորուած ոգեկանութեան է յանգում: Հէնց այստեղ է, որ Հայր Ալիշանի գրեթէ բոլոր գործերում յայտնաբերում ենք վերնագիր-առաջաբան-բովանդակութիւն եռաստիճան համակարգութիւնը, որ է մեր քննութեան առարկան:

Ալիշանի դէպքում նկատելի է հետեւեալ սկզբունքը: Վերնագիրը բացւում է առաջաբանում, ապա տուեալ գործի իմաստային եւ գրական խտացմամբ եզրափակող կապակցութեան վերածում վերջաբանում: Ալիշանի դէպքում նկատելի է հետեւեալ սկզբունքը: Վերնագիրը բացւում է առաջաբանում, ապա տուեալ գործի իմաստային եւ գրական խտացմամբ եզրափակող կապակցութեան վերածում վերջաբանում: Ալիշանի մի շարք երկերի վերնագրերը ոչ թէ ներկայացնում են այդ գործերի բուն բովանդակութիւնը, այլ գրանց հոգեւոր խորհուրդը, ինչպէս օրինակ «Հայատան յառաջ քան զլինելն Հայատան», «Սոփերք հայկական», «Յուշիկք հայրենեաց Հայոց», «Արշալոյս քրիստոնեութեանն Հայոց», «Հայապատում» գործերում:

Պատահական չէ, որ Ալիշանի տարբեր գրքերը բուն վերնագրից բացի ունեն նաեւ ենթավերնագրեր, որոնք կամ բացատրում են վերնագրի իմաստը, կամ գեղարուեստօրէն այն աւելի պատկերաւոր դարձնում: Մի շարք դէպքերում անգամ առաջաբաններում ինքն է բացատրում, թէ ինչ է նշանակում այն, կամ

ինչու է այդպէս վերնագրել գործը: Օրինակ, 22 գրքոյկից կազմուած «Սովերբ հայկական» գրքի առաջաբանում Ալիշանը նշում է, որ դրանք հրատարակում է փոքր գրքոյկներով:

Սովերբ նշանակում է փոքր մատեան՝ գրքոյկ. անուանումը վերաբերում է ոչ թէ անմիջաբար յիշեալ երկերին, այլ գրանց բնագրերը փոքր չափի մատեաններով հրատարակելուն, որի համար էլ մատեանաշարն անուանել է «Սովերբ Հայկական»<sup>6</sup>:

Իրապէս, «Սովերբ»ում Ալիշանը հրատարակել է պատմական բնոյթի մատեանագրական երկեր, որոնք լինելով ծաւալով ոչ մեծ ստեղծագործութիւններ, վերցուած են մեծ չափեր ունեցող «Ճառընտիր», «Տօնապատճառ» եւ համանման ժողովածուներից եւ հրապարակ են իջել ուսուցողական ու գիտակրթական նպատակով: Շարքի վերնագիրը ցոյց է տալիս Ալիշանի նպատակադրումը՝ անսահման մեծ պատմագրական եւ աստուածաբանական տեղեկոյթը պարփակել սահմանափակ տարածութեան մէջ եւ ստեղծել հեղինակ-ընթերցող զգայական-իմացական հաղորդակցութեան հնարաւորութիւնների՝ հայ պատմիչների ծաւալուն պատմագրական երկերի կողքին հրատարակելով նոյն իրադարձութիւններին նուիրուած տօնախօսական բնոյթի աւելի մատչելի եւ փոքր ծաւալի ստեղծագործութիւններ: Վերջինս տպագրական եւ արհեստավարժական բնոյթի յատկանիշների հիման վրայ անուանելը հասկանալի է դառնում Մխիթարեանների՝ նոյն այդ շրջանում տպագրուած մէկ այլ շարքի՝ «Մատենագրութիւն նախնեաց»ի հետ համեմատութեամբ: Մխիթարեանները այս շարքի առանձին գրքերով հրատարակութեան պատրաստեցին հայ դասական պատմագրութեան եւ միջնադարեան մատեանագրութեան մի նշանակալի մասը՝ բնագրագիտական լուրջ քննութեամբ ու գիտական ծանօթագրութիւններով: Ուղիղ դրանց համանմանութեամբ է Ալիշանը անդրադառնում հայոց պատմագրական ու հոգեւոր ժառանգութեանը՝ նիւթի ներքին տրամաբանութեամբ միմեանց կապակցուած երկերի ամբողջութիւնը ներառելով գրական-հասարակական գործընթացում՝ «ի պէտս ազգայնոց»:

Ալիշանի մի շարք գործեր մի իւրայատկութիւն էլ ունեն. անկախ իրենց գիտականութեան աստիճանից, դրանք ստուգաբան-

6 Հատարակութիւնը սկսում է 1853 թուականից եւ ընդհատումներով շարունակում մինչև 1934 թուականը: Ընդհանուրը՝ 24 հատոր: Բացի վերշին երկու հատորներից՝ 22 հատորը կազմել է տպագրութեան է պատրաստել Հայր Ղեւոնդ Ալիշանը:

ւում են ԺԹ. դարի 40-70-ական թուականների հայ գրական ուղղութիւնների եւ աշխարհայնացքի շրջանակում՝ որպէս գիտական հաւաստում հայր Ալիշանի գրական ըմբռնումների։ Այդ գործերի գրական վերնագրերը արդէն գիտական հիմնաւորումն են ստանում առաջաբաններում, տեղայնացում որեւէ գրական ուղղութեան (առաւելապէս վիպապաշտութեան ու առասպելական դպրոցի) շրջանակում, ապա համակարգը բնորոշող կառուցուածքային տարրերի ու ելակէտային նշանների համագրութիւնը շարունակում է բովանդակութեան մէջ՝ որոշակիօրէն գրական եւ պատկերաւոր շարադրանքով։

**Ստեղծագործական մտայդացման** եւ գաղափարական յղումների բնոյթով է բացատրում նաեւ Ալիշանի գիտագրական ողջ ժառանգութեան ամփոփումը համարուող «Հայապատում»<sup>7</sup> գործի վերնագիրը։ Բառացիօրէն այն կարող էր նշանակել պատմութիւններ հայերի կամ Հայաստանի մասին, եւ կամ էլ պատում Հայաստանի եւ հայ ժողովրդի մասին՝ ներկայացուելով իբրեւ պատմագրական ասք։ Գրքի կառուցուածքը եւ Ալիշանի առաջաբանը յուշում են, որ վերջին տարրերակը աւելի հարազատօրէն է ներկայացնում վերնագրի իմաստը եւ մեկնաբանում է իբրեւ հայոց համընդհանրական պատմութիւն՝ ըստ պատմիչներից եւ մատենագրական տարրեր երկերից վերցուած համապատասխան հատուածների։

**Ստեղծագործական այս մօտեցումով,** Ալիշանը իր երկու գործերով եւս՝ «Հայաստան յառաջ քան զինելին Հայաստան» եւ «Արշալոյս քրիստոնեութեանն Հայոց», ստեղծել է Հայաստանի նախաքրիստոնէական եւ քրիստոնէական շրջանների գիտագեղարուեստական պատումները՝ փառաբանելով ազգային-պատմական ու գոյաբանական երկու կարեւոր իրադարձութիւն եւ դրանց դրոյթները ներկայացնելով նաեւ Առաջաբանում։ Առաջինը՝ Հայաստանի, որպէս աստուածատունկ դրախտի, ջրհեղեղից յետոյ կեանքի նորոգման, ապա՝ Հայաստանի, Դ. դարի սկզբին Տրդատ Մեծի եւ Գրիգոր Լուսաւորչի գործունէութեամբ քրիստոնէութիւն առաջինն իբրեւ պետական կրօն ընդունելու, առաքելական քարոզութեան դիպաշարերն են։ որոնք հայր Ալիշանը ներկայացնում է պատմափիլիսոփայական եւ աստուածաբանական իւրօրինակ հայեցակարգով, եւ այս երկուսի՝ հայոց պատմութեան եւ քրիստոնէութեան

7 Հրատարակութիւնը սկսւում է 1901 թուականից, 800 էջ, (նոյնը հրատարակում է փոքրադիր 4 հատորով): Տպագրութիւնն աւարտւում է 1902ին, Ալիշանի մահից յետոյ։ Յղումներն՝ այս գրքից։

փոխներթափանցումը մէկը միւսի մէջ ամենամեծ «գաղտնիքն է», որ ձեւակերպում է ստանում է երկու գործերի վերնագրերում էլ եւ ընդգծում Ակզբի, շօշափելի Պատմութեան մէջ՝ Աստծոյ անսահմանափակութեան եւ քրիստոնէական Ոգու անընդհատութեան դադափարը:

«Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան»<sup>8</sup> գործը լոյս է տեսել Միսիթարեան վարդապետի մահից յետոյ՝ 1904 թ.: Միանդամայն ակնյայտ է, որ այս դէպքում էլ գրքի վերնագրի բառացի թարգմանութիւնը՝ «Հայաստանը Հայաստան լինելուց առաջ», ճշորէն չի արտայատում ո՛չ նրա գաղափարը, ո՛չ իմաստը: Բառացի այն նշանակում է «հայ ժողովրդի նախապատմութիւնը», ինչպէս որ Դեակոնովն է 1960ական թթ. վերնագրել իր աշխատանքը՝ «Предистория Армянского народа»:

Զըհեղեղից յետոյ մարդկութեան նախասկզբի եւ աստուածատունկ դրախտի գաղափարը այնուհետեւ արտայայտում է հէնց առաջին գլխի վերնագրում «Հայրենիք մեր սկզբնավայր մարդկութեան. Դրախտն Ադինայ»:

Ալիշանը խստօրէն հետեւում է Միսիթարեան հայրերի, ի մասնաւորի Զամշեանի, Աւգերեանի եւ միւսների գաղափարապաշտական պատմահայեցութեանը, իր հերթին վկայելով, թէ Հայաստան «երկիր դրախտավայրը» աստուածաշնչեան Արարատի ու Նոյեան տապանի առասպելաբանութեամբ մեր ազգային գոյաբանութեան աստուածաշնորհ տրուածքն է, աստուածատունկ դրախտը՝ հայոց ելման տեղը, գոյութեան կենտրոնը՝ առաքելահաստատ եկեղեցով ու հաւատքով զօրացեալ: Բազմաթիւ փաստերով իր առաջադրած դրոյթը վկայելուց յետոյ՝ Միսիթարեան վարդապետի միտքը բանաստեղծական բացառիկ ներշնչանքով ներկայացնում է իր պատկերացուած դրախտը՝ Աղամի ու Եւայի կեանքով. «Ո՞րչափ ժամանակ մեր երկրին նախազրիեղեղեան հողն մշակեցաւ անոնցմէ եւ սնոյց իր անմահունակ մշակները, քանի<sup>9</sup> առաւօտ արեգակն յարեւեկեան դրունս դրախտին բարձր ծառակամարաց վրայէն իր ոսկեծիրանի նշոյլը վառեց անոնց հեշտալի հովանոցին վերայ, եւ կամ քանի<sup>9</sup> իրիկուն յետ օրուան զուարճախառն վաստակոյ քառառաջ գետոց մէկու աղբերահոսանց եզերք նստած՝ նորահրաշ արարչութեան վրայ, կամ իրենց ապագայի ծննդոց եւ երկրիս բաղդին վերայ կու խօսէին, ոչ գիտեմք, ոչ բննեմք»<sup>9</sup>:

8 Լոյս է տեսել 1904-ին, Վենեսիկում, 290 էջ:

9 «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», Յղումներն՝ այս գրքից:

**Հնդհանուր գեղարուեստական ուղղուածութեան համար է,** որ Ալիշանը Աղամին ու Եւային նուիրուած բաժինը աւարտում է Միլտոնի «Դրախտ կորուսեալ» երկարաշունչ քերթուածի համապատասխան հատուածի վկայակոչմամբ։ Այս գործի գրութեանը յաջորդել եւ «Արշալոյսին» նախորդել է «Յուշիկ» Հայրենեաց Հայոց»ի տպագրութիւնը։ Ոչ միայն ժամանակային, այլեւ շարադրանքի ոճով եւս այն միջանկեալ տեղ է գրաւում յիշեալ երկու գրքերի միջեւ, իր գեղարուեստականութեամբ զիջելով առաջինին եւ անհամեմատ գերազանցելով երկրորդին։ «Յուշիկ»ը եթէ բառացի թարգմանենք, կնշանակի «հայոց հայրենիքի յուշիկներ», որ եւս իմաստային առումով այնքան էլ յստակ չէ։ Նկատի ունենալով գրքի կառուցուածքը եւ բովանդակութիւնը, վերնագիրը արտայայտում է հետեւեալ իմաստը։ «հայոց հայրենիքի պատմութեան դրուագները»։

**Առաջաբանում Ալիշան ձեւակերպում է Հայրենիքի իր հասկացողութիւնը, ապա թուարկում, թէ ի՞նչն է աշխարհագրական տարածութիւնից ձեւաւորում հայրենիքը, եւ այն ինչպիսի յիշատակներ կարող է ունենալ։ Առաջաբանի հինգերորդ բաժինը սկսում է տրամաբանական հարցադրմամբ, թէ ի՞նչ է իր՝ ծերունագրդ Նահապետի արածը, եւ թէ հայրենեաց յիշատակների առջեւ ի՞նչ է լինելու այս գիրքը։ Հարցադրումն աւարտում է գրքի վերնագրի գլխատառ վկայակոչմամբ։ «Արդ ինչ պիտի ըլլայ ուրեմն, ով Հայկակ, այնքան գործոց եւ յիշատակաց դիմաց այս իմ քեզի ընծայածս – ՅՈՒՇԻԿ ՀԱՅՐԵՆԵԱԾ Հայոց»<sup>10</sup>։**

**Ալիշանը, նկատի ունենալով ծածկագրուած գաղափարը, որ կրում է իր գործի անուանումը, անդրադառնում է նաեւ հարցին, թէ ինչու այն ոչ թէ կոչել է «Յիշատակ»։ այլ «Յուշիկ» փոքրացուցիչ ձեւով եւ նշում է պատճառները։ Նախ՝ լեզուի խնդիրը, որ այստեղ գրաբարի նախասկզբնական վսեմութիւնը չունի եւ, ըստ հեղինակի, աղճատուած է փոքր-ինչ։ Ապա վկայուած իրադարձութիւնների հանգամանքը, որ ոչ միայն սղուած են մեծապէս, այլեւ ոչ միշտ եւ ոչ բոլորն են պատմական նշանակալից դէպքեր։ «Զհամարձակեցայ զանոնք յիշատակ անգամ անուանել, այլ միայն ՅՈՒՇԻԿ։ Յուշիկ միայն են անոնք՝ համեմատութեամբ յիշատակաց շատութեան եւ մեծութեան»։ Երկրորդ հատորի «Յուշիկ»ը**

10 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., Յուշիկ հայրենեաց հայոց, հտ. Ա., Վենետիկ 1869, յղումներն այս գրքից։

Եզրափակող վերջաբանը դարձեալ աւարտում է գրքի վերնագրի յիշատակութեամբ, այն հաւատով, որ հայութիւնը ապրելու է, քանի դեռ մարդկութիւնը կայ եւ հնչեցնելու է իր յիշատակները: Եւ որքան բարձր ու անանձնական է Հայր Ալիշանի փափաքը, թէ այդ նուիրական յիշատակներից մէկը կարող է լինել «Յուշիկներ»ի իր գիրքը: «Եւ ո՞հ թէ այն խորին եւ լոին արձագանքաց՝ նուաղ վանգին մըլլար այս իմ քեզի նուիրածս, Հայկակ, Յուշիկ Հայրենեաց հայոց»:

*Միանգամայն ակնյայտ է, թէ ինչպէս է գործում վերնագիր-առաջաբան-բովանդակութիւն համակարգութիւնը Հայր Ղեւոնդ Ալիշանի գործերում: Կրկին դառնանք «Արշալոյս Քրիստոնէութեանն հայոց»ի գիտագրական բնագրին:*

Վերեւում ասուեց, որ խորագրից իսկ երեւում է, որ իմաստակիր բառն այս գրքում Լոյսն է, որ զուգորդուելով սկզբի, սկզբնաւորման, նորոգութեան գաղափարի հետ, դարձել է արշալոյս, ուստի գրքի այս անուանումը նշանակում է «Քրիստոնէութեան տարածումը Հայատանում»: Լոյս բառը այստեղ յարաբերում է երեք հիմնարար հասկացութիւնների հետ, որոնք երեքն էլ որպէս սկիզբ՝ արշալոյս հասկացութիւնն են ներկայացնում.

Առաջին՝ Աստուածաշնչում հնչող աստուածային առաջին խօսքը՝ «Եղիցի լոյս» (Ծն Ա, 3):

Երկրորդ՝ Քրիստոսի եւ քրիստոնէութեան լոյսը խորհրդանշելը, ինչպէս որ Քրիստոս է ասում: «Ես լոյս յաշխարհ եկի»:

Երրորդ՝ Սուրբ Գրիգորին տրուած Լուսաւորիչ բնորոշումը:

Առաջաբանում, ներկայացնելով իր յղացման ելակտային դրոյթը, թէ ինչու «զլոյս նախակարգեցի», եւ Արշալոյս համարիմ անոր առաջին երեւոյքն եւ սփոխին յերկրի եւ յազգի մերում», *Մխիթարեան հայրը յետագայ շարադրանքի մէջ քրիստոնէութեան կրօնա-փիլիսոփայական համընդհանուր ընկալումը բացայացում* է նոր կողմերով՝ ձեւակերպելով Քրիստոս «ունենալով», Քրիստոսի հետ կեանքի նոր ձեւը, աշխարհի կերպն ու ճանապարհի վերջնակտը, ուր ուղղորդում է Աստուած մարդկանց: «Դարձեալ ինքն որ աղքիւր էր կենաց եւ եկաւ ի մէջ մահկանացուաց՝ նոր եւ անմահ կեանք մի տալու, զնոյն եւս Լոյս կոչեց, իր սիրտը շօշափող աշակերտին բերնով: «Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան»<sup>11</sup>:

11 Ա.Լ.ԻՇԱՆ, Հ. Պ., Արշալոյս Քրիստոնէութեանն Հայոց, Վենետիկ 1901: Յղումներն՝ այս գրքից:

**Անշուշտ, Հայր Ալիշանը մեծագոյն աստուածաբան էր եւ նուիրեալ հաւատաւոր, եւ, ողջ կեանքն անցկացնելով Մայրավանքի կամարների տակ, իր ներքին որոնումների մէջ երկար էր փնտռել իմաստը. անցնելով աշխարհիկ մարդուն տրուած բոլոր փորձութիւններով՝ գրեթէ սրբացել էր, հասել մտքերի, զգացմունքների ու արարքների ապաշխարհիկ հաւասարակշռութեան՝ ճանաչելով տիեզերական Բանականութիւնը, որ իր անչափելի խորութեամբ ու բարձրագոյն նշանակութեամբ իշխել է հայ մարդու ու հայոց պատմութեան վրայ. «Զայս այսպէս նանչնալով իր նախկին հաւատացեալքն, իր (Քրիստոսի) վարդապետութիւնը լսողն, ուսող եւ ուսուցողն, Լոյս, Լուսաւորութիւն, Լուսաւոր կրօնի՝ անուանեցին «Քրիստոնէութիւն». Որպէս եւ է իսկ, քան զամենայն գիտութիւն ստոյգ եւ պայծառ, մնայուն եւ յախտենական. Որոյ առջեւ՝ ամենայն գիտութիւնն ու գիտութ որոց այնքան հետամուտ են մարդիկ, ոչ միայն փոքր ինչ են, այլ եւ չնչին, կամ շուք մի, որ եւ այն չքանայ, նախ, ի վախճանի իւրաքանչիւր անձին, ապա ի վախճան առհասարակ մարդկութեան եւ աշխարհիս, եւ մնայ միայն Լոյսն կենդանի եւ կեանքն լուսաւոր, յաշխարհ իսկալոյս, ուր Արարիչն քնակի, իրեն լուսաւորեալ եւ սիրելի արարածովք»<sup>12</sup>:**

**Ալիշանի եւ Սրուանձտեանցի ոչ միայն գրքերի, այլեւ անգամ դրանց վերնագրերի քննութիւնը ցոյց է տալիս երկուսի ունեցած վերաբերմունքը պատմութեան, ժամանակները կապակցող Ոգու հանդէպ, որ սահմանելով ազգային մեր հութիւնը, անուն է ստանում այս ստեղծագործութիւններում: Բայց խիստ տարբեր է նրանց ձեռագիրը:**

**Այս դիտարկումը, անշուշտ, չպիտի մեկնաբանել հակադրութեան եզրով. նրանց՝ Ալիշանի եւ Սրուանձտեանցի առաքելութիւնն ունէր պատմական եւ հոգեբանական նախադրեալ՝ ազգային ճակատագրի իմաստով. նրանք կոչուած էին կապակցելու միեւնոյն ճանապարհի երկու տարբեր հատուածներ: Պատահական չէ բնաւ, որ խորքային դրդապատճառներով ձեւաւորուած երկու մեծերի գիրն էլ դառնում է ազգային մշակոյթի, ազգակազմիչ հասկացութիւնների տեղեկատուական կենտրոն, ազգային կեանքի շարժումը նորոգող, վերածնող գաղափար: Ալիշանը իրերին ու իրադարձութիւններին նայում է վերեւից՝ աստուածայայատնութեան ու լոյսի գաղափարը բարձրացնելով մինչեւ խորհրդանիշի աստիճան: «Ար-**

12 Նոյն տեղում:

շալոյս քրիստոնէութեան Հայոց»ում նրա գծած ճանապարհը<sup>13</sup> հաս-  
տատապէս նշանակիր է եւ ներկայացնում է Բանը, Ոգու շարժման  
տրամաբանութիւնը՝ մշակութաբանական լայն իմաստով։ Նոյն կե-  
տի վրայ միաւորում են ազգասիրական նրա առաքելութիւնն ու  
բացառիկ, կրօնական ճգնակեցութեամբ կարգաբերուող բանակա-  
նապաշտութիւնը, որ ըստ էութեան, է' նրա աշխարհայեացքի հի-  
մունքը։ Վաղ քրիստոնէութիւնից սկիզբ առնող, իր զարգացման,  
հիմնաւորման եւ համակարգային ամբողջականութեանն հասած  
Քրիստոսի շքեղ Լոյսը, քրիստոնէական վարդապետութիւնը  
Ալիշան ճանաչում է իրբեւ գիտութիւն, որ կեցութեան բոլոր  
բաղադրամասերը ի մի է բերում մէկ միասնական շրջանակի, ներ-  
քին գաղափարի շուրջ ձեւաւորուած ամբողջականութեան մէջ։

Մի փոքր այլ է Սրուանձտեանցի պարագան։ Հայոց մեծ  
ուխտաւորը իրականութեան ճանաչողութիւնը սկսում է ներքեւից.  
Ներքեւը, հայոց գոյութենական տառապանքը սկսում է լուսաւո-  
րուել, անուն առնել ազգային ճակատագրի ողբերգական դրուագ-  
ներում։ Եւ բնաւ պատահական չէ, որ ժողովածուից ժողովածու  
իրականութիւնը տեղայնանում է, գոյներն աւելի են թանձրանում,  
ոգեկանութեան զգացողութիւնը տեղի է տալիս թուրքական  
բռնակալութեան մղձաւանջում կորուսուող ազգի ընկերային ու  
բարոյական կացութեան քննութեանը։ 1874 թուրքականին՝ «Գրոց ու  
բրոց»ից անմիջապէս յետոյ, Սրուանձտեանցը հրատարակում է իր  
երկրորդ ժողովածուն՝ «Հնոց եւ նորոց»ը, որ հիմնաւորապէս կազ-  
մուած էր գրաւոր աղբիւրներից։ Այն աղբիւրագիտական բացա-  
ռիկ նշանակութիւն ունի եւ գաղափարական մի յղում՝ հայոց մա-  
տենագրութեան պատմութիւնը ուղիղ իմաստով համընկնում է  
իրեն ստեղծող ժողովրդի պատմութեանը՝ իրբեւ արտայայտութիւն  
նրա աշխարհաճանաչողութեան եւ աշխարհին առընչուելու նշա-  
նային համակարգի։

13 Հայր Ալիշանի աստուածաբանական հարցադրումները, Հայոց քրիստո-  
նական Դարձի նրա հայեցակետը հանգամանօրէն կապուած է նրա թէ՝  
գիտական, թէ՝ ստեղծագործական ժառանգութեան հետ եւ, նոյնանալով  
պատմութեամբ աւանդուած դիպաշարին՝ նախակզրից մինչեւ Տրդատ  
թագաւորի մահը՝ «առաջին թշոյլ կամ մուտք Քրիստոնէութեան ի Հայս»,  
«Ս. Թադէոս եւ աշակերտ իւր», «Ս. Թարթողիմէոս եւ աշակերտֆէ», ...  
«Հալածամբ Քրիստոնէութեան», «Տրդատ եւ Գրիգոր», «Հոփիսիմեամբ»,  
... «Գրիգոր Լուսաւորչ», ... «Կերքին գործ Ս. Լուսաւորչին», «Վախճան  
Տրդատայ», ներքեւից քարձրանում է վերեւ՝ Աստծոյ նանաչողութիւնը  
ուղեկցելով ինքնութեան նանաչողութեամբ եւ ինքնանանաչողութիւնը:

**Գարեգին Մրուանձտեանցի գրական ժառանգութեան մէջ նիւթերի առատութեան, հարցադրումների բազմազանութեան եւ գիտական մեկնաբանութեան առումով խիստ ուշագրաւ է «Մանաւայ»<sup>14</sup> ժողովածուն՝ տպագրուած 1876 թուականին, Պոլսում:**

**Գիրքը բաղկացած է մի քանի մասից՝ «Հայրենեաց համն ու հոտը», առաւելապէս նիւթ առած Վանի, Արգեստանի միջավայրից. տեղայնացուած ու գունագեղ է մեծ Հայաստանի այս փոքր եզերքի պատկերը՝ խոհանոցից մինչեւ ծիսական արարողութիւններ, հաւատալիքներ ու ծէսեր, չքնաղագեղ բնութեան ու ծովի գերզգայական պատկեր, ապա «հայրենեաց վեպի եւ զրոյցի», ուր տեղաւորուած են հէքիաթներն ու առակները, «Երգի եւ նուագի հայրենեաց», որտեղ տեղ են գտել ձեռագրերից քաղուած միջնադարեան բանաստեղծութեան մի քանի սքանչելի պատառիկներ, ապա աշխարհիկ ժողովրդական երգեր, հանելուկներ, դիւթանք, բժշկարան եւ այլն:**

**«Մանաւայ» կը մատուցանեմ հայ բանասիրաց ոչ իբրեւ Սինայ անապատին երկնատեղաց նուիրական հաց, այլ իբրեւ Հայաստանի գագպին, որ երկրի ծաղկանց հիւրերէն օդին մէջ կը գոյանայ, ցողով այդոյն կը շաղախի, արեւուն ջերմիկ նառագայթներէն կը զանգի, կը հասունենայ եւ շաբարախմորի եւ մեղրի համով իբրեւ գինդ յակինք կամ հատ-հատ մարգարիտ կ'իջնայ մացաներու, տերեւոց, գագի փշոց եւ մատառուկի ոստոց վրայ ի գոյն արծաթանոյլ եւ ի ճեւ նոան հատի, զոր ժողովեն մանկտիք եւ հարսունք, բլիթ-բլիթ յօրինելով, պաշար կազմեն ի բաղցը նաշակ անձանց եւ հիւրոց ի մեծարանս»:**

**Վարդապետը «Մանաւան» սկսում է ճիշտ նմանողութեամբ երկու հազար տարի իրենից առաջ վկայուած, ջրից փրկուած ու իսրայէլի ժողովրդին եգիպտական գերութիւնից փրկած Մովսէսի պատմութեան, որ ասում էր, թէ. «Այդ ժամանակ Տէրը Մովսէսին ասաց. «Ես լսեցի իսրայէլի որդիների տրտունջը. Ասա՛ նրանց. երեկոյեան միս կուտէք, իսկ առաւօտեան հացով կը կշտանաք ու կիմանաք, որ Ես ձեր Տէրն եմ ու ձեր Աստուածը» (Ել 16,12). Փրկութեան ձգտող մարդկանց ներքին աղերսանքն ու ցանկութիւնները Մովսէսի կերպարով հաղորդւում են Աստծուն, եւ Նա կատարում է հրաշքը, որ աներկբայօրէն վերականգնում է վստահութիւնը Նրա**

14 ՄՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ, Մանաւայ, Կ. Պօլիս, 1876 թիւ. Յղումներն այս գրքից:

ներկայութեան նկատմամբ՝ իսկ առաւօտեան բոլորը տեսան բանակի շուրջն իջած ցողը։ Երբ ցողը գոլորշիացաւ, գետնին թեփաձեւ, եղեամի նման մանր մի բան մնաց։ Դա Աստծոյ ուղարկած երկնային հացն էր։ Խորայէլցիներն այդ հացը անուանեցին «Մանանայ»։ Նրա համը գաթայ էր յիշեցնում։ Աստուած հրամայեց մանանան հաւաքել այնքան, որքան «անիրաժեշտ է մեկ օրուայ համար»։

Աստուածաշնչեան այս դրուագի համաբանութեամբ, քննելով «Մանանայ» ժողովածոն իբրեւ բնագիր, տեսնում ենք, որ այն ունի խստօրէն կառուցուած համակարգ, որ շարժում է հաղորդում ազգի առօրեական կեանքից դէպի նրա հոգեւոր Տիեզերքը ձգուող պատմութեանը։ «Մանանայի» առաջին հայեացքից առանձին, բայց տրամաբանօրէն յաջորդական միաւորները, որ ոչ պատմաշխարհագրական վայրի, ոչ գրծառնական նշանակութեամբ են կապակցուած, հէնց այս խնդրագրութեամբ հաւաքուած են հայոց Ոգու ճանաչողութեան ներքին-միաւորող գաղափարի շուրջ՝ ստեղծելով փիլիսոփայական ամբողջութիւն, հայրենաճանաչութեան մի հանրագիտրան։ Մովսէս մարգարէի եւ երկնքից իջած մանանայի անընդհատ վկայումները ժողովածուի մէջ, նոյն եռաստիճան՝ վերնագիր-առաջաբան-բովանդակութիւն աստիճանակարգութեամբ հայեացակարգ են ձեւաւորում, որ ինքն իր ներսում ինքնաստեղծում է՝ անընդհատ նորոգելով ե՛ւ պատումի իմաստը, ե՛ւ ներկայանալով իբրեւ ազգափրկութեան ծրագիր։ Մովսէս մարգարէի կերպարը բազմաթիւ անգամներ է սահմանային եզրով վերադաբել մեզ՝ վկայելով, թէ սահմանափակ տարածութիւնը, հնարաւորութեան սահմանափակութիւնը հնարաւոր է ճեղքել, յաղթահարել Ոգու, հաւատքի պատասխանատուութեամբ ու ինքնագիտակցութեամբ։ Եթէ Մովսէս «հաց տուեց ժողովրդին», հայոց բնաշխարհում, կիսակործան մատուռների ու վանքերի պատերի ներսում, ծաղկած, աստուածալոյս մատեանների ու մամիկների աղօթքների մէջ է կորսուող ժողովրդի ինքնութեան հացը, եթէ Մարգարէն փրկեց իրական, գոյաւոր Խորայէլը, Սրուանձտեանցը խնդիր է դնում մոռացութեան փոշիներից փրկել ազգային բնաշխարհը, քրիստոնէական մշակոյթը, հայոց մարող-ուժացող գոյութիւնն առհասարակ։ «Գիտեմ, թէ զանազան ախորժակ ու նաշակ ունեցողներն զանազան դատաստան կ'ընեն ու եւ իցէ գործոյ մը, ուստի զանացի գէք, որ իւրաքանչիւր ոք իւր քիմքը գոհացնելու պատառ մը ուտելիք կամ պուտ ըմպելիք կարողանայ գտնել այս թղթերուս մէջը, հեղինակութիւն չէ», - գրում է նա։

Սրուանձտեանցը երեւոյթների զգայական ընկալումից անդին, դարերի լոռութիւնից այն կողմ բացայայտում է ազգային կեցութեան իմաստակիր նշանները, մաքրում դրանք երկրորդական, կենցաղային գծերից ու մօտեցնում բացարձակութեան։ Նա ներքեւից վերեւ է նայում, տեսնում Լոյսը եւ որովհետեւ գիտի, որ Ոգին աստուածաշնորհ է, գիտի նաեւ, որ Աստծոյ տուածը չի կարող սպառուել, կորնչել, ոչնչանալ...

Հայ հայրենիքի մեծ ուխտաւորը գտել էր ժողովրդին ծառայելու իր ճանապարհը, սակայն ազգային կոնկրետ ժամանակը նրան նոր խնդիրներ ու նոր մտահոգութիւններ էր առաջադրում։ Քննութեան այլ առիթի թողնելով նրա ազգային-լուսաւորչական ահոելի գործունէութիւնը՝ փաստենք, որ տարէցտարի վլուգում էր նրա հաւատի տունը, խարիխլում Ոգու ու Գրի սքանչելի հաւասարակշռութիւնը, որ բացարձակ պատմողականութեամբ երեւում է Սրուանձտեանի յետագայ գործերում։

1877-78 թուականների ոռու-թուրքական պատերազմից յետոյ Կ. Պոլսի պատրիարք Ներսէս Վարժապետեանի յանձնարարութեամբ Սրուանձտեանցն ու երկու վարդապետ գործուղուեցին արեւմտահայ գաւառները՝ հայ բնակչութեան դժոհութեան առիթները, կարիքները, ժողովրդագրական վիճակագրութիւնը տեղեկագրելու եւ թուրքական պետութեանը ներկայացնելու նպատակով։ Դժնղակ ու ողբերգական տարիներ էին արեւմտահայոց համար՝ պատերազմից աւերակուած երկիր, սով, դաղթ, մահ, մահ...

Գ. Սրուանձտեանցը լինում է հայաբնակ բազմաթիւ վայրերում՝ Տիգրանակերտ, Սեբաստիա, Մարզուան, Ամասիա, Թոքատ, Պաֆրա, Սինոպ, Տիւրիկ, Ակն, Կամախ, Երգնկա, Դերջան, Կարին, Արարկիր, Բաղեշ, Վան, Մուշ։ Իր տպաւորութիւնների ու խորհրդածութիւնների արդիւնքում ընթերցողի սեղանին է դնում «Թորոս Աղբար Հայաստանի նամբորդ»<sup>15</sup> խորհրդաւոր վերնագրով գիրքը, որի առաջին հատորը լոյս է տեսնում 1879 թուականին, երկրորդը՝ 1884-ին։ Այս գրքում, որի ժամանակային ու տարածականութիւնը, ի տարբերութիւն նախորդ գրքերի, կայուն շրջագծեր, յատակ ճանաչելի սահմաններ ունի, մի տեսակ վերջաւորուած համակարգ է ձեւաւորում Սրուանձտեանցի ստեղծագործութեան

<sup>15</sup> ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՐՈՒԱՆԶՏԵԱՆՑ, Թորոս Աղբար Հայաստանի նամբորդ, մասն Ա., Բ., Կ. Պոլիս, 1879, 1884։ Այսուհետեւ յղումները՝ այս գրքից։

մէջ եւ նրան մտահոգող գաղափարը հասցնում լուծումի: Թուրքական իրականութիւնը այլեւս դէմք ունի, որոշակիութիւն եւ անուանում է յստակ: Հայոց բնաշխարհը երեւում է ամենաբարդ ու ճակատագրական շրջանում, ինքն իր ժամանակի մէջ սպառուելով: Սրուանձտեանցը գրի է առնում այդ ժամանակը՝ միանգամյան այլ տրամադրութեամբ ու նպատակադրումով: «Եթէ նկատեն ումանք պակաս բաներ գրուածքիս մէջ,- Ա. գրքի առաջաբանում գրում է Սրուանձտեանց վարդապետը,- կատարելապէս իրաւունք ունին իրենց կողմանէ լրացընելու դիտողութիւններ գրել, բայց միշտ անկողմնակալ հոգւով, ինչպէս մեք ալ նոյն զգուշութիւն ըրած ենք, վասն զի ամէն ո՛վ կրնայ համոզուիլ, թէ գրածներուս նպատակը ազգայնոց յառաջադիմութիւն եւ իրենց օգտակարութիւնը ցոյց տալ է միայն: Հայը Հայուն ծանօթացնել, Հայը Հայուն սիրել տալ է բոլորովին իմ փափախս եւ ջանիս»:

Այս կենտրոնի շուրջ է հաւաքւում «Թորոս Ադրաբ»ի բնագիրը: Գիրքը ուղեգրական պատառիկների, վերյուշերի, գրառումների ու յիշողութիւնների մի հետաքրքիր համահաւաք է՝ տեղտեղ լուսաւորուած հեղինակի ստեղծագործ հոգու բացառիկ չքնաղ գոյներով, տեղ-տեղ ծանրընթաց ու գետնամած՝ ցաւի ու ողբերգութեան պրկումներով: Բայց գրքի իմաստաբանական կենտրոնը, գաղտնագիրը Առաջաբանի մէջ է, որտեղ հեղինակը ներկայացնում է իր ստեղծագործական մտադրոյթը: տարալուծուղ ազգային հոգեբանութեան ու դարավերջի ճակատագրական արհաւիրքներում որոնել չօշափելի հայրենիքը, չկորցնել ինքնութեան նշանը, նշել արեւմտահայոց չարաբաստիկ վիճակի պատճառներն ու հետեւանքները պատմութեան զարգացման օրինաչափութիւններում:

Այս առաջադրոյթի հանդէպ գիտակցութեան խթանող ճանապարհը, սակայն, անցնում է փորձութիւնների ու հայրենիքաց նշխարների կորուստների միջով, ամենացաւալին՝ կորուսեալ է Ոգին. «Դեռ ցամաքը չելած, հաւք մը կը տեսնեմ, սեւորակ փետուրով, բարակ վզիկով, գլորիկ գլխով, զոր ծռած էր մէկ քով, թխորակ աչերով, սպիտակ լանջով, ծնկները ծալած ջրոյն ալեաց վրայ կ'երեայ...»:

Զնայած եղեմական բնութեան չքնաղ գոյներին ու ձայներին՝ սպաւորի, անգին կորուստ ունեցողի նման, մէն-միայնակ է այս թռչունը, որ նայողին տագնապ ու մտահոգութիւն է յարուցում.

«-Ի՞նչ կ'որոնես, խեղճ հաւուկ:

-Ի՞նչ է աս թոշնոյն անունը,- հարցուցի ծովացի լնկերներէս:  
Պատասխանեցին.

-ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ է իւր անուն»:

**Ահա այստեղ է, որ Սրուանձտեանց այլաբանական այս դրուագը լցնում է փիլիսոփայական խոր բովանդակութեամբ։ Յար եւ նման սրտակոտոր հայ մարդուն, ի՞նչ է փնտոռում այս չքնաղ հաւքը ծովի ջրերում։ «Թորոս աղբար, որ մէկ կորուստներդ կը խնդրես, արդեօֆ տաճարին եթէ դահիճին, Լեւոնեանց եթէ Ներսիսեանց... Աստուածաբան մատեանն եթէ գահոյք արքունական, ծիրանին եթէ եմիփորնն, Վկայասիրին բուրվառն ու աղօթամատոյց եթէ Թորոսի սուրբն վրիժուց։ ...Եյ Թորոս աղբար, թոփիր ինձ հետ, թոփիր զբեզ տանեմ հայրենիքն եեւացեալ Հայոց ի տես, ի յոյզ եւ ի յոյս...Բայց դու կը մերժես, չես համոզուիր, եւ ոչ տեղէդ կը բաժնուիս։ Այո, դու ուղիղ ես, յուգէ, խնդրէ, որոնի այդ տեղ. ԿՈՐՈՒՍԾ՝ ԿՈՐՍՈՒԱԾ ՏԵՂԸ...»։**

**Զեւի ու բովանդակութեան ինչպիսի՝ կատարելութիւն, ինչպիսի՝ չքնաղ ու իմաստաւոր ինքնագիտակցութիւն. անանձնական սիրոյ մէջ ճշմարիտ է ամէն զոհաբերութիւն, ամէն ինքնանուիրում։ Սրուանձտեանցի՝ բացարձակ յարաբերական եզր չճանաչող այս ձեւակերպմանը, Բացարձակի այս յանձնառութեանը յարաբերական է թերեւս միայն հայր Ալիշանի «Յուշիկներ»ի առաջաբանը՝ իբրեւ ճշմարտութեան չափանիշի սահմանում, գոյաբանական պատմութիւն։ «Հայրենիք... Այն ֆիչ անուններէն մէկն է այս՝ զոր գրեթէ ամօթ է բացատրել բարեկիրք եւ զգօն անձի մը, թէ եւ չըլլայ շատգէտ կամ բանիրուն. գրեթէ մտքէն առաջ սիրտն կու հասնի, կ'ըմբռնէ, կ'իմանայ զայս. կ'իմանայ զայն նաեւ երբ չի կրնար ֆիչ բառով կամ խօսքով բացատրել. մանաւանդ ուր քաղաքական ու բարոյական տեսութիւնք՝ ասոր իմաստն այլ այլալած կամ զանագանած ըլլան»։**

**Անշուշտ, զուգադրական քննութեան նիւթ կարող են դառնալ Հայր Ղեւոնդ Ալիշանի «Յուշիկ Հայրենեաց Հայոց»ի եւ Գարեգին Սրուանձտեանցի «Թորոս Աղբար Հայաստանի նամբորդ» գրքի հատորները, որքան էլ որ դրանք նոյնական չեն գեղարուեստական սկզբունքի եւ իմացաբանական համարժէքի տեսակէտից։ Սա, սակայն, այլ նիւթ է։**

## ԱՄՓՈՓՈՒՄ

**ԺԹ.** դարակէսից սկսած՝ հայոց ազգային ինքնութեան գիտակցումն ուղղուած էր գոյաբանական կառոյցում կայուն, մշտական, յաւելրժական ելակէտի որոնմանը, որ նոյնական էր հայրենիքի ինքնաճանաչման, ինքնաստեղծումի գաղափարին, ոգու եւ ոգեկանութեան պատմութեանը: Եւ եթէ «ի սկզբանէ էր Բանն», ապա մշակութաբնական լայն իմաստով, Բանի մէջ յօրինում ու պատմում էր Հայոց Հայրենիքը:

Բնաաշխարհագրական տարածութիւնը Հայրենիք է դառնում, երբ լցում է բովանդակութեամբ՝ լեզու, հոգեւոր եւ նիւթական արարումներ, հաւատք, եկեղեցի եւ մարդկային սիրագործութիւններ: Վկայակոչելով բազմաթիւ փաստեր ու իրողութիւններ, նրանք միանգամայն հիմնաւոր գիտական հիմունքի վրայ են դնում գրականութեան, մշակոյթի մէջ ոգու, ազգային ժամանակի արտածման տեսութիւնը, յստակ սահմանելով, թէ իւրաքանչիւր պատմական ժամանակ ունի աշխարհի իր պատկերն ու պատկերացումը: Սա առաւել լաւ երեւում է ե՛ւ Գարեգին Սրուանձտեանցի, ե՛ւ Հայր Ղեւոնդ Ալիշանի գործերում:

ՍԻՐԱՆՈՅՑ ՄԱՐԳԱՐԵԱՆ

### Summary

## THE RELATIONSHIP BETWEEN TITLE, PREFACE AND BOOK IN REV. FR. GHEVONT ALISHAN'S AND BISHOP GAREGIN SRVANDZTENAZ'S LITERARY HERITAGE

SIRANUSH MARGARYAN

Father Ghevond Alishan and Garegin Srvandztyants play an exceptional role in the history of the spiritual and cultural life of Armenia in the 1st half of the 19th century. A huge theoretical and critical literature on the scientific and artistic heritage of Alishan, who spent his whole life under the arches of the Main Cathedral, has been collected, and the activities of Srvandztyants in collecting literary material and folklore from the point of view of national significance are also considered from different angles. Based on the scientific problem of this article, we tried to present the work of these two great people from a completely different starting point of the interpretation, presenting its epistemological and artistic equivalent. Their enlightening socially oriented views on life, built on the unity of the homeland, Armenian nature, material knowledge and Christian worldview, allow us to consider such models that are not only the product of a special literary style, but also have a certain ideological function. We turned to a three-level concept – Title-Preface-Content, imagined how such an amazing worldview is completely immersed inside it and how completely the fundamental science of the homeland is contained in it. We examined such works of Srvandztyants as "*Literary and orally*", "*Manana*", "*St. monk Thoros*", compared them with the works of Father Alishan "*The Dawn of Armenian Christianity*" and "*The Memories of the Armenian Motherland*". A comparative review revealed interesting layers in these works, which we have presented in this article.